Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ ...3...

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ»-ի
Հոգաբարձուների խորհրդի

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի 14.03.2001 թ.-ի
թիվ 296 հրամանով
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրում
գրանցման օրը՝ 24.06.2003 թ.
գրանցման համարը՝ 222.160.00137
Վկայական՝ 03Ա060694

14.03.2001 թ.ին գրանցված կանոնադրության թիվ
001.2 փոփոխությունը գրանցված է Հայաստանի
Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից
«19» 06 2006 թ.
Ամսաթիվ

2005 թ. հոկտեմբերի 3-ին կայացած նիստի
որոշմամբ

Գլխավոր տնօրեն՝
Յ. Արմենեան

ՀՀ Պետական ռեգիստրի ղեկավար՝
Գ. Սարգսյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ»-ը ստեղծվել է «Հայաստանի ամերիկյան համալսարան» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն համատեղ ձեռնարկության վերակազմակերպման արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի համաձայն: «Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ»-ը (այսուհետ՝ «*Հիմնադրամ*») հանդիսանում է «Հայաստանի ամերիկյան համալսարան» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն համատեղ ձեռնարկության (գրանցման թիվ՝ 273.110.02113) իրավահաջորդը, և «Հայաստանի ամերիկյան համալսարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն համատեղ ձեռնարկության բոլոր իրավունքներն ու պարտավորությունները անցել են Հիմնադրամին: «Հայաստանի ամերիկյան համալսարան» շահույթ ստանալու նպատակ չհետապնդող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն համատեղ ձեռնարկությանը հանդիսանում է «Հայաստանի ամերիկյան համալսարան» համատեղ ձեռնարկության իրավահաջորդը:
Հայաստանի ամերիկյան համալսարանը հիմնադրվել է 1991 թվականին Հայկական բարեգործական ընդհանուր միության, ԱՄՆ-ի Կալիֆորնիայի համալսարանի և ՀՀ Կառավարության համագործակցության շնորհիվ: Հայաստանի ամերիկյան համալսարանն ստեղծվել է 1991 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի» և Կալիֆորնիայի համալսարանի միջև համագործակցության համաձայնագրի և Հայասատանի Հանրապետության Նախարարների խորհրդի 1991 թվականի սեպտեմբերի 21-ի «Հայաստանի ամերիկյան համատեղ համալսարան ստեղծելու մասին» թիվ 570 որոշման համաձայն: «Հայաստանի ամերիկյան համալսարան» համատեղ ձեռնարկությունը ՀՀ ֆինանսների նախարարության արժույթային-տնտեսագիտական վարչության կողմից 1991 թվականին գրանցվել է ՀՀ տարածքում համատեղ ձեռնարկությունների գրանցամատյանում (գրանցման համարը՝ ՀՁ-0074-ՀՀ), որպես մասնակից կողմեր նշվել են Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեն (Հայաստան) և «Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա» ֆիրման (Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

1.2. Հիմնադրամի հիմնադիրներն են (այսուհետ՝ «*Հիմնադիրներ*»).

- Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 23.01.2001թ. թիվ 48 որոշմամբ Հայաստանի Հանրապետության կողմից «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հիմնադրի լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարությանը:

- «Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա» ոչ պետական, չահույթի նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպությունը, որը գրանցված է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի օրենքների համաձայն և որի գրանցված գրասենյակը գտնվում է հետևյալ հասցեում. ԱՄՆ,

Կալիֆորնիա նահանգ, 94612, Օուքլենդ, Լեյքսայդ Դրայվ, թիվ 300, 4-րդ հարկ, գրանցման վկայական թիվ Ա 424369, ներկայացուցիչ՝ Հարություն Արմենէան:

1.3. Հիմնադրամը Հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է:

1.4. Իր գործունեությունն իրականացնելիս, Հիմնադրամը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենքներով ու իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել ներկայացուցչություններ և մասնաճյուղեր: Օտարերկրյա պետություններում Հիմնադրամի ներկայացուցչություններն ու մասնաճյուղերը ստեղծվում են գտնվելու վայրի երկրի օրենսդրության համաձայն:

1.6. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Հիմնադիրները պատասխանատու չեն Հիմնադրամի պարտավորությունների համար, ինչպես նաև Հիմնադրամը պատասխանատու չէ Հիմնադիրների պարտավորությունների համար:

1.7. Հիմնադրամն ունի իր խորհրդանիշը: Խորհրդանիշի նկարագիրը հետևյալն է. «Հայաստանի ամերիկյան համալսարան» անվանման հապավումը կազմող՝ հայերեն (ՀԱՀ) և անգլերեն (AUA) մեծատառերի համակցություն, որը արտացոլում է Արարատ լեռան ուրվագիծը: Խորհրդանիշի էսքիզը կցվում է սույն կանոնադրությանը:

1.8. Հիմնադրամի անվանումն է.

- հայերեն լեզվով՝ «Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ» (կրճատ՝ «ՀԱՀ հիմնադրամ»).
- ռուսերեն լեզվով՝ **„Американский Университет Армении Фонд"** (կրճատ՝ **„АУА Фонд"**).
- անգլերեն լեզվով՝ "American University of Armenia Fund" (կրճատ "AUA Fund"):

1.9. Հիմնադրամն ունի դրոշմակնիք և կլոր կնիք իր անվանումով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

1.10. Հիմնադրամի գտնվելու վայրն է. Հայաստան, 375019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի պողոտա, թիվ 40 շենք:

1.11. Հիմնադրամը գործում է անժամկետ:

1.12. Հիմնադրամի շահառուներն են. Հայաստանի ամերիկյան համալսարանի մագիստրոսի որակավորման աստիճան շնորհող ծրագրերի ներկա և ապագա ուսանողները, շրջանավարտները, լրացուցիչ կրթության

վկայագրային ծրագրերի մասնակիցներն ու շրջանավարտները, գիտահետազոտական ծրագրերում ներգրավված անձինք ու դրանց համագործակիցները, այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց օգտին հիմնադրամը մատուցում է իր կրթական ծրագրերի մասնագիտացման հետ կապված ծառայություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երը:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2.1. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ունի Հիմնադիրների գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

2.2. Հիմնադրամն իրավաբանական անձի կարգավիճակ է ստանում պետական գրանցման պահից: Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտավորություններ:

2.3. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ և ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1. Հիմնադրամի նպատակներն են.

- իրականացնել Մագիստրոսի որակավորման աստիճան շնորհող կրթական ծրագրեր,
- իրականացնել լրացուցիչ կրթության վկայագրային ծրագրեր,
- իրականացնել գիտահետազոտական ծրագրեր՝ ելնելով Հայաստանի և տարածաշրջանի տնտեսական, սոցիալ-քաղաքական զարգացման առաջնահերթություններից,
- աջակցել ակադեմիական գերազանցությանը և քաջալերել ազատ բանավեճը, գիտականությունը, ղեկավարելու կարողությունը և հասարակությանը ծառայելը:

3.2. Հիմնադրամի գործունեության առարկան է.

- ներդնել կրթության արևմտյան մոդելը Հայաստանի կրթական համակարգում,
- լրացնել տեղական բարձրագույն կրթական հաստատությունների կրթական ծրագրերի առաջարկը,

- ներդնել ուսուցման և գիտահետազոտական ծրագրերի նոր մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- համագործակցել այլ գիտահետազոտական և բարձրագույն կրթական հաստատությունների հետ:

3.3. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է իր կանոնադրական նպատակներին:
Հիմնադրամը անձամբ իրականացնում է հետևյալ ձեռնարկատիրական գործունեությունը.
- Մագիստրոսի որակավորման աստիճան շնորհող կրթական ծրագրերի իրականացում.
- Լրացուցիչ կրթության վկայագրային ծրագրերի իրականացում.
- գիտահետազոտական ծրագրերի իրականացում.
- Հիմնադրամի գործունեությանը աջակցող ձեռնարկատիրական գործունեություն, այդ թվում նաև հանրային սննդի կազմակերպում, գրքերի, գրենական պիտույքների և այլ առնչվող առարկաների վաճառք գրախանութի միջոցով, տպագրական գործունեություն.
- Հիմնադրամի կրթական ծրագրերի մասնագիտացման հետ կապված ծառայությունների մատուցում, այդ թվում՝ բժշկական, իրավաբանական, գիտահետազոտական, շուկայագիտական, ճարտարագիտական, այդ թվում՝ շենքերի և կառուցվածքների նախագծային աշխատանքներ, գործարար խորհրդատվության:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

4.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

4.2. Հիմնադրամի սկզբնական գույքի արժեքը կազմում է 802315219 (ութ հարյուր երկու միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր տասնինը) ՀՀ դրամ:
Հիմնադրամի գույքի տնօրինման և կառավարման կարգը մանրամասն սահմանվում է Հիմնադրամի համապատասխան ներքին կանոնակարգով, որը հաստատում է Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհուրդը:

4.3. Հիմնադրամի գույքի կազմավորման աղբյուրներ կարող են լինել.
- Հիմնադիրների կամավոր ներդրումները,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,
- դրամական մուտքերը պետական բյուջեից,
- դրամաշնորհները,
- Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

- հանգանակությունները՝ միջոցները, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),
- օրենքով չարգելված այլ աղբյուրները:

4.4. Հիմնադրամի սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո: Հիմնադրամի գույքը չի կարող բռնագանձվել՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են.
- Հոգաբարձուների Խորհուրդը.
- գլխավոր տնօրենը, այսուհետ՝ «*Նախագահ*»:

5.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների Խորհուրդն է, որը հսկողություն է իրականացնում Հիմնադրամի գործունեության նկատմամբ:

5.3. Հոգաբարձուների Խորհուրդը կազմված է 7 (յոթ) անդամներից: Հիմնադրամի կազմավորման ժամանակ Հոգաբարձուների Խորհուրդը ձևավորվել էր հետևյալ կերպ՝
- երկու ներկայացուցիչ՝ նշանակված ՀՀ կառավարության կողմից, այդ թվում՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարը,
- հինգ ներկայացուցիչ՝ ընտրված Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի կողմից:

5.4. Հոգաբարձուների Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանվում է 3 (երեք) տարի: Հոգաբարձուների Խորհրդի անդամները կարող են վերընտրվել:

5.5. Հոգաբարձուների Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են.
- նրա գրավոր դիմումի հիման վրա,
- նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Հոգաբարձուների Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով (երեք քառորդով),
- լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում:

ՀՀ կողմից առաջադրված Հոգաբարձուների Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարել ցանկացած պահի ՀՀ կառավարության որոշմամբ:

Հոգաբարձուների Խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած նրա մահվան դեպքում:

Հոգաբարձուների Խորհրդի կազմում թափուր տեղ առաջանալու դեպքում Հոգաբարձուների Խորհրդի նախագահը կամ նրան փոխարինող անձը 10

(տաս) օրվա ընթացքում տեղեկացնում է այդ մասին Հիմնադիրներին: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հիմնադիրները առաջարկում են նոր անդամի ընտրության համար թեկնածուներ՝ թափուր տեղի մասին ծանուցումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրվա ընթացքում: Հոգաբարձուների Խորհրդի նոր անդամների առաջարկվող թեկնածությունները հաստատվում են Հոգաբարձուների Խորհրդի կողմից՝ Հոգաբարձուների Խորհրդի անդամների ձայների 2/3-ով (երկու երրորդով):

5.6. Հոգաբարձուների Խորհրդի նախագահը, այսուհետ՝ «*Ատենապետ*» ընտրվում է Հոգաբարձուների Խորհրդի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Ատենապետը.

- կազմակերպում է Հոգաբարձուների Խորհրդի աշխատանքները,
- գումարում է Հոգաբարձուների Խորհրդի նիստեր և նախագահում է դրանք,
- կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը:

5.7. Հոգաբարձուների Խորհրդի իրավասությանն են պատկանում.

- Հիմնադրամի ռազմավարական ծրագրերի հաստատումը,
- Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,
- Հինադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,
- Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
- Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի նոր անդամների ընտրությունը և Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
- Ատենապետի, Նախագահի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
- Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,
- տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,
- Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
- Նախագահի հաշվետվությունների լսումը,
- իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
- Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,
- օրենքով, կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

5.8. Հոգաբարձուների Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

Հոգաբարձուների Խորհրդի նիստերը գումարվում են պարբերաբար՝ առնվազն տարին մեկ անգամ: Հոգաբարձուների Խորհրդի նիստերը հրավիրվում են Հոգաբարձուների Խորհրդի անդամների 1/3-ի (մեկ երրորդի) պահանջով, Ատենապետի սեփական նախաձեռնությամբ, կամ Նախագահի առաջարկությամբ:

5.9. Հոգաբարձուների Խորհուրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Հագաբարձուների Խորհրդի անդամների կեսից ավելին: Հոգաբարձուների Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Հոգաբարձուների Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նախագահի և ատենապետի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի վերակազմակերպման, լուծարման և կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատում) որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

5.10. Հոգաբարձուների Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

5.11. Հոգաբարձուների Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող բոլոր անդամները:

Նիստի նախագահողը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Արձանագրության մեջ նշվում են.

- նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
- նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը,
- նիստին մասնակցած անձանց քանակը,
- նիստի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

5.12. Հիմնադրամի գործադիր մարմինը Նախագահն է: Հիմնադրամի Նախագահն ընտրվում է Հոգաբարձուների Խորհրդի կողմից:

Նախագահի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով:

5.13. Նախագահը ղեկավարում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը և լուծում է այդ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերը, բացառությամբ այն հարցերի, որոնք Հոգաբարձուների Խորհրդի բացառիկ իրավասությունն են հանդիսանում:
Նախագահը պատասխանատու է Հիմնադրամի ընթացիկ գործունեության համար և տարեկան հաշվետվություն է ներկայացնում Հոգաբարձուների Խորհրդին կատարված աշխատանքների վերաբերյալ:

5.14. Նախագահը, իր իրավասության սահմաններում,
- առանց լիազորագրի գործում է Հիմնադրամի անունից,
- ներկայացնում է դրա շահերը,
- տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում ֆինանսական ռեսուրսները,
- կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր,
- տալիս է լիազորագրեր,
- բանկերում բացում է հաշիվներ,
- հաստատում է հաստիքներ,
- արձակում է հրամաններ,
- Հիմնադրամի աշխատակիցներին տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ,
- ինչպես նաև իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Հոգաբարձուների Խորհրդի կողմից Նախագահին վերապահված այլ իրավասություններ:

5.15. Նախագահը այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Հոգաբարձուների Խորհրդի համաձայնությամբ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Հիմանդրամն ինքնուրույն է իրականացնում սույն կանոնադրությամբ նախատեսված իր գործունեությունը: Հիմնադրամն ինքնուրույն է պլանավորում իր գործունեությունը, մշակում իր զարգացման հեռանկարները և որոշումներ ընդունում իր գործունեության վերաբերյալ:

Պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Հիմնադրամի գործունեությանը միջամտելն արգելվում է՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

6.2. Հիմնադրամի գործունեության ընթացքում ստացված ամբողջ եկամուտը պետք է օգտագործվի նրա կանոնադրական խնդիրների իրականացման համար:

6.3. Հիմնադրամի հարաբերություններն այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ գործունեության բոլոր բնագավառներում իրականացվում են

պայմանագրային հիմունքներով: Հիմանդրամն ինքնուրույն է ընտրում իր կողմից կնքվող պայմանագրերի առարկան և պայմանները:

6.4. Իր կանոնադրական գործունեությունն իրականացնելիս, Հիմնադրամն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունել ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող ցանկացած որոշում:

6.5. Հիմնադրամը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր պայմանագրային պարտավորությունների համար, այդ թվում նաև հարկային կարգապահության համար:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

7.1. Հիմնադրամի ֆինանսական տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի առաջին օրը և ավարտվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջին օրը, բացառությամբ առաջին ֆինանսական տարվա, որն սկսվում է Հիմնադրամի պետական գրանցման օրը:

7.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հիմնադրամը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:

7.3. Նախագահը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքով սահմանված պետական մարմիններ ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնադրամի մարմիններին և այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

7.4. Հիմնադրամի ծախսերն են՝
- կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը,
- վարչակառավարչական ծախսերը:

Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերի չափը սահմանվում է Հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերի 20 (քսան) տոկոսի չափով:

Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերի հաշվառումը պետք է կատարվի Հիմնադրամի այլ ծախսերից առանձնացված կարգով:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

8.1. Հիմնադրամի ֆինանսական գործունեության վերստուգումը կատարվում է անկախ աուդիտորի կողմից՝ առնվազն տարին մեկ անգամ: Անկախ աուդիտորն ընտրվում է Հոգաբարձուների Խորհրդի կողմից: Հոգաբարձուների Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է կատարվել արտահերթ աուդիտ:

8.2. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին հաջորդող 6 (վեց) ամսվա ընթացքում Հիմնադրամն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տեղեկություններ հրապարակող մամուլում պարտավոր է հրապարակել՝

- հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում վարչակառավարչական ծախսերի չափի, գույքի օգտագործման մասին, Հոգաբարձուների Խորհրդի անդամների, Նախագահի և Հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե դրանք օգտվել են Հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում,
- իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները,
- ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե Հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 (տասը) միլիոն դրամը:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

9.2. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումն ընդունելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում, հիմնադրամը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին՝ հաղորդելով տեղեկություններ՝ վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև հիմնադրամի պարտավորությունների իրավահաջորդության մասին:

9.3. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի միացման ու միաձուլման ձևով:

9.4. Միաձուլման ձևով վերակազմակերպման մասին որոշումը պետք է ընդունվի միաձուլվող յուրաքանչյուր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում, որը պետք է հաստատի նաև միաձուլման պայմանագիրը, փոխանցման ակտը, միաձուլման կարգն ու պայմանները: Հիմնադրամների միաձուլման դեպքում դրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծված հիմնադրամին՝ փոխանցման ակտին համապատասխան:

9.5. Հիմնադրամների միացման դեպքում միացմանը մասնակցող հիմնադրամները կնքում են միացման մասին պայմանագիր: Միացման ձևով վերակազմակերպման մասին որոշումը պետք է ընդունվի միացող յուրաքանչյուր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում, որը պետք է

հաստատի նաև միացման պայմանագիրը, փոխանցման ակտը, միացման կարգն ու պայմանները: Հիմնադրամների միացման դեպքում միացած հիմնադրամներից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են միացման հետևանքով ընդլայնված հիմնադրամին՝ փոխանցման ակտին համապատասխան:

9.6. Հիմանադրամը լուծարելու մասին որոշումը կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

Հիմնադրամը կարող է լուծարվել՝

- եթե Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,
- եթե իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,
- եթե հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների փոփոխություններ,
- եթե Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,
- օրենքով նախատեսված այլ դեպքերում:

9.7. Հիմնադրամի լուծարումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի խորհրդանիշի էսքիզ



Կատարված է 2005թ.-ի հոկտեմբերի 3-ին

Գրանցված է 13 թերթից

Ս. Ավագյան

«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
«ԱՈՒԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
«АУА ФОНД»
«AUA FUND»
01511187